

երբ Քողաքներու յաճախակի յարձակմանց պատճառաւ առուտուրը բոլորովին դադրած էր, Սդանիսլաւ Ռէվէրա Բողոքքի՝ Զապլոցիէ գիւղին երկիրները Սդանիսլաւ քաղաքին տրամադրութեան տակ ձգեց, եւ հրաւիրեց Հայերը, որ գան հոն բնակին: Այն ժամանակ բազմաթիւ Մոլտաւիացի եւ նաեւ Թրանսիլվանիացի Հայեր հոն դիմեցին, այն տեղ հաստատուեցան, եւ քիչ ետքը Մոլտաւիոյ բովանդակ արջառավաճառութիւնն ձեռք անցուցին<sup>116</sup>:

Գէորգ Տուգա Մոլտաւիոյ իշխանին երկրորդ գահակալութեան ժամանակ, (1669—1672) Մոլտաւիացի, մանաւանդ Սուչաւացի բազմաթիւ Հայեր առաջնորդութեամբ իրենց Մինաս եպիսկոպոսին, որ 1649էն ի վեր արեւելեան Հայոց եպիսկոպոսն էր եւ ի Սուչաւա կը նստէր<sup>117</sup>, ելան գաղթեցին ըստ մասին ի Ղէհաստան, եւ ըստ մեծագոյն մասին իրենց եպիսկոպոսին հետ դէպ ի Թրանսիլվանիա<sup>118</sup>:

Հայոց իրենց եպիսկոպոսին հետ այսպէս բազմութեամբ գաղթելուն պատճառն էր այն ժամանակի հարկերու սաստկութիւնը, բայց մանաւանդ 1671ին<sup>119</sup> Հոկտ. 29ին Միքայէլ Հրնգուլ անուն անձի մը (որ շատ հաւանական է թէ Հայ մ'ըլլայ,) Պոյարներու նիւթած դաւաճանութեան Հայոց մասնակցելուն համար՝ իշխանէն կրած հալածանքն<sup>120</sup>:

Հայք ի սկզբան Քարբաղեան լեռներն ապաւինեցան. եւ երբ տեսան որ իշխանն իրենց կողմն չահիլ չկրցան, անցան Թրանսիլվանիոյ սահ-